

**ՀԱՐԿԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՓՈՆԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

*Հիմնաբառեր.* հարկային բեռ, հարկային քաղաքականություն, կրթավճարներ, հանրային ֆինանսավորում

Բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորումը երեք ձևով է ընթանում: Առաջին դեպքում, կրթությունը ամբողջությամբ ֆինանսավորվում է պետությունից և ուսանողը ընդհանրապես ազատվում է կրթավճարներից, ինչպես նաև կրթական ծառայություններին առնչվող ենթակառուցվածքային ծախսերից (հանրակացարանների, ինտերնետ սրահների, փորձարարական լաբորատորիաների վարձեր և այլն): Երկրորդ, երբ մատուցվող մասնագիտական կրթական ծառայությունների ծախսերի փոխհատուցման ամբողջ բեռը ընկնում է ուսանողի վրա: Երրորդ դեպքում, մասնագիտական կրթական ծառայությունների ֆինանսավորումը կատարվում է «խառը» ձևով՝ հանրային և մասնավոր միջոցներով, որն առավել տարածում ունի մասնագիտական կրթական պրակտիկայում:<sup>1</sup>

Մակրոտնտեսագիտության տեսանկյունից խնդիր է դրվում բացահայտելու մասնագիտական կրթության պետական և մասնավոր ֆինանսավորման չափաբաժինների օպտիմալ հարաբերակցությունը: Պետական բյուջեի հաշվին կրթության ֆինանսավորման պարագայում ազգաբնակչությունը մի կողմից սպառման ծախսերում կրճատում է կրթավճարների չափը, սակայն մյուս կողմից, բախ-

---

<sup>1</sup> The European Higher Education Area in 2015: Implementation Report

վում է հարկային բեռի ավելացման հիմնախնդրին, կապված աճող հանրային ծախսերի փոխհատուցումն ապահովող հարկային լրացուցիչ մուտքերի հետ:

Մյուս ծայրահեղ դեպքում, երբ բարձրագույն մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվում է մասնավոր կրթավճարների հաշվին, ուսանողների շրջանում համալսարանական տարիներին և անգամ դրանից որոշ ժամանակ անց, ձևավորվում է լարված սոցիալ-տնտեսական իրավիճակ: <sup>1</sup> Դրանով իսկ կրթական շուկայում նվազում է մասնագիտական ուսումնառության գրավչության աստիճանը և բուհական ծառայությունների պահանջարկը: Զուգահեռաբար բարձրանում է աշխատանքի շուկայում բարձրագույն կրթությամբ մասնագետների պահանջարկը, որոնց պատրաստման համար պետությունը լրացուցիչ միջոցներ է ծախսում և ի վերջո, հավասարակշռություն է սահմանվում մասնագետների առաջարկի ու պահանջարկի միջև:<sup>2</sup>

Հետևաբար, մակրոտնտեսական միջավայրում կարևորվում է կրթության ֆինանսավորման դիտարկումը հարկային քաղաքականության տեսանկյունից, այնպես, որ մասնագիտական կրթության հանրային և մասնավոր ոլորտում ֆիսկալ գործիքներով ձևավորվի հարկային համաչափ բեռ:


Այսպես, եթե մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվի հանրային միջոցներով, ապա կրթության պետական ֆինանսավորման աճի հետ մեկտեղ կավելանան նաև հարկային մուտքերը (տե՛ս գծապատկեր 1.): Հակառակ պարագայում, երբ մասնագիտական կրթությունը ամբողջովին ֆինանսավորվի մասնավոր հատվածի կողմից, ապա կրթական ծառայությունների մատուցման հսկայա-

---

<sup>1</sup> Խաչատրյան Ն.Ն., Շարունակական կրթության հիմնախնդիրները, //Էկոնոմիկա, 2010, 2010, #3 , 53 էջ

<sup>2</sup> Bologna with student eyes 2015, //The European Students Union

ծավալ ռեսուրսներ չեն պահանջվի պետության կողմից, ուստի և այդ առումով կնվազի հարկային մուտքերի ավելացման պահանջարկը: Մասնավոր հատվածում կրթական ծախսերի կրճատման պարագայում մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման բեռը ընկնում է պետության վրա, և դրանով իսկ, ավելանում է հարկային մուտքերի պահանջարկը (տե՛ս գծապատկեր 1, P կոր):<sup>1</sup>



**Գծապատկեր 1. Կրթական ծախսերի փոփոխման վարքագիծը մասնավոր և պետական ֆինանսավորման պարագայում**

Հետևաբար «խառը» սկզբունքով, այսինքն պետական և մասնավոր միջոցներով մասնագիտական կրթության ֆինանսավորման համար հասարակությունում ձևավորվում է  $a_0$  մակարդակի հարկային բեռ: Դրանով, հնարավորություն է ստեղծվում պետական միջոցների հաշվին փոխհատուցելու կրթական ծախսերի մի մասը, իսկ մյուս մասը ֆինանսավորելու մասնավոր հատվածի հաշվին՝ այդ շրջա-

<sup>1</sup> Գծապատկերներ 1-3-ը կազմված է հեղինակի կողմից:


նակում չնվազեցնելով մասնագիտական կրթության գրավ-  
չությունը:<sup>1</sup>

Կրթության ֆինանսավորման մասնավոր հատվածի  
ընդլայնման հետևանքով ֆիսկալ քաղաքականության ար-  
դյունավետության անկումը ներկայացնենք գծապատկեր 2-  
ի միջոցով:

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս, որ բարձրագույն մաս-  
նագիտական կրթության ֆինանսավորման աճը՝ ի հաշիվ  
մասնավոր հատվածի (P<sub>i</sub>), հանգեցնում է պետական միջոց-  
ներով ֆինանսավորման կրճատման (G<sub>i</sub>): Հատկանշականն  
այն է, որ «խառը» ֆինանսավորմամբ հավասարակշռման  
արդյունքում հարկային բեռի ավելացում է տեղի ունենում  
(a<sub>0</sub>-ից՝ a<sub>1</sub> կետ), և այն էլ առավել արագ տեմպերով, քան  
կրթական ծախսերի աճն է (Δb): Որքան ավելանում է  
կրթական ֆինանսավորման ծավալում մասնավոր հատ-  
վածի չափաբաժինը, այնքան մեծանում է հարկային բեռի և  
կրթական ծախսերի հավելաճի հարաբերակցությունը՝ Δa  
/ Δb > 1: Ուստի, հնարավորինս պետք է ձգտել բարձրագույն  
մասնագիտական կրթությունը ֆինանսավորելու պետական  
միջոցների հաշվին, դրանով իսկ նվազեցնելով Δa / Δb  
հարաբերակցությունը, հարաբերականորեն կրճատելով  
կրթության ֆինանսավորմանն ուղղված հարկային մուտ-  
քերը:

---

<sup>1</sup> International Standard Classification of Education: Fields of Education and  
Training 2013, ISCED 2013, UNESCO Institute for Statistics




**Գծապատկեր 2. Ֆինակալ քաղաքականությունը կրթության մասնավոր ֆինանսավորման աճի դպքում**

Հատկանշականն այն է, որ բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումը հսկայածավալ ռեսուրսներ է պահանջում, ուստի դրա կազմակերպումը զուտ հանրային միջոցներով, հատուկ է տնտեսապես գերզարգացած պետություններին:<sup>1</sup>

Այսպիսով, կրթական շուկայում մակրոտնտեսագիտության խնդիրը «խառը» ֆինանսավորման այնպիսի չափաբաժնի որոշումն է, երբ  $\Delta a / \Delta b$  հարաբերակցությունը ձգտի 1-ի: Այս դեպքում, կրթական ծախսերի հավելաճը ուղեկցվում է հարկային բեռի համարժեք հավելաճով:

<sup>1</sup> The European Higher Education Area in 2015: Implementation Report, p. 164-166



**Գծապատկեր 3 Ֆիսկալ քաղաքականությունը կրթության պետական ֆինանսավորման աճի դեպքում**

Իսկ երբ կրթական ծախսերի ֆինանսավորման ծանրության կենտրոնը տեղափոխվում է պետական հատված, ապա դիտվում է միայն հարկային բեռի հարաբերական կրճատում: Այսինքն  $a_0$ -ն տեղափոխվում է  $a_1$  կետ՝ ձախ ընթացքով (տե՛ս գծապատկեր 3), միաժամանակ արձանագրելով  $\Delta a / \Delta b$  հարաբերակցության նվազում ( $\Delta a / \Delta b < 1$ ): Դրանով իսկ, մակրոտնտեսական միջավայրում կրթական ծախսերի հավելաճը առաջանցիկ բնույթ է կրում դրանց ֆինանսավորման նպատակով ձևավորվող հարկային մուտքերի հավելաճից, որն էլ վկայում է կրթության ոլորտում արդյունավետ ֆիսկալ քաղաքականության վարման մասին:

### ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդհանուր առմամբ, հասարակությունը պետք է ձգտի մասնագիտական կրթության ֆինանսավորման ծանրության կենտրոնը տեղափոխելու պետական ոլորտ: Ազգաբնակչության սպառողական զամբյուղում մասնավոր հատվածի միջոցներով ավելացնելով կրթության ֆինան-

սավորումը, ընդհանուր հաշվով, պետությունը կորցնում է ֆիսկալ խթանիչ քաղաքականության արդյունավետությունը: Կատարելով զգալի կրթավճարներ, ազգաբնակչությունը զրկվում է այլ սոցիալական ծախսերի իրականացման զգալի հնարավորություններից, որոնք ստիպված փոխհատուցվում են հանրային միջոցներով: Իսկ դա ենթադրում է պետության կողմից լրացուցիչ հարկային մուտքերի հավաքագրում:

***Nonna Khachatryan***

Associate professor, PhD in Economics  
nonnakhachatryan@yahoo.com

## **TAX REVENUES AND EDUCATION FUNDING RELATIONSHIP**

***Keywords:*** tax burden, tax policy, tuition fees, public funding.

Overall, the public sector must seek ways to activate state funding of vocational education. In case of increasing private funding for education, in general, the state loses its effectiveness of fiscal policy stimulating. Making substantial tuition fees, society is deprived of other social costs implementation of significant features that have to be reimbursed from public funds. This condition is formatting additional tax revenues from the state.

***Нонна Хачатрян***

Доцент, кандидат экономических наук  
nonnakhachatryan@yahoo.com

## **ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ НАЛОГОВЫМИ ПОСТУПЛЕНИЯМИ И ФИНАНСИРОВАНИЕМ ОБРАЗОВАНИЯ**

***Ключевые слова:*** налоговая нагрузка, налоговая политика, плата за обучение, государственное финансирование.

В целом, государственный сектор должен стремиться к активизации финансирования профессионального образования. При увеличении финансирования образования из частного сектора, государство, в общей сложности, теряет эффективность стимулирования фискальной политики. Делая значительную плату за обучение, население частично лишается других социальных услуг, которые должны были возмещаться за счет государственных средств. Тем самым формируются дополнительные налоговые обязательства.

*Ավետիք Բեգոյան*

Հյուսիսային համալսարանի հայցորդ  
Begoyan@bk.ru

## **ՀԱՍՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

*Հիմնաբառեր.* փոխանակվող գործարքներ, տրանսֆերտներ, եկամուտ, անհատույց ծառայություններ

Հանրային հատվածի կազմակերպություններ են համարվում համայնքների ղեկավարների աշխատակազմերը, պետական կառավարչական հիմնարկները, և օրենքով սահմանված կարգով գրանցված պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ըստ ստորակարգության ներառում են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման կազմակերպման մասին» օրենքը, ինչպես նաև Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (ՀՀՀՀՄՍ):

Կառավարության կողմից ընդունված որոշումները և հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից ընդունված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշ-